



Մենք և Մեր Իրավունքները

Սոցիոլոգիական հետազոտության
հաշվետվություն

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հապավումներ և հասկացությունների մեկնաբանություն	2
Ներածություն	3
Մեթոդաբանություն.....	5
1. ՀՀ-ում ԼԳՏՏ անձանց իրավունքների իրավիճակի ընդհանուր նկարագիրը.....	8
1.1. Պատկերացումներ սեփական իրավունքների և պարտականությունների վերաբերյալ, ԼԳՏՏ անձանց նկատմամբ անհանդուրժողականության պատճառները	8
1.2. Անհանդուրժողականությունն ու խտրականությունը Հայաստանում (գյուղական-քաղաքային բնակավայրեր, Հայաստան - այլ երկրներ համեմատության մեջ).....	10
2. ԼԳՏՏ անձանց նկատմամբ վերաբերմունքը կոնկրետ ոլորտներում, անհանդուրժողականության և խտրականության դրսևորումները.....	13
2.1. Ընտանիք, բարեկամական, ընկերական շրջապատ	13
2.2. Մասնագիտական-աշխատանքային շրջանակներ.....	15
2.3. Կրթական հաստատություններ. դպրոց, բուհ.....	16
2.4. Առողջապահություն	17
2.5. Ջանգվածային լրատվամիջոցներ (ՁԼՄ).....	17
2.6. Իրավապահ մարմիններ, ոստիկանություն	18
2.7. Զինվորական ծառայություն և կալանավայրեր.....	18
2.8. Եկեղեցի.....	20
2.9. Հասարակական և ժամանցի վայրեր	20
2.10. Ծառայությունների ստացում.....	21
3. Գեներային ինքնության և սեռական կողմնորոշման արտահայտման ինքնասահմանափակման գործոնները և դրա հետևանքները.....	22
4. Սեռական կողմնորոշման և գեներային ինքնության վրա հիմնված խտրականության նվազեցման ուղիները.....	24
Ամփոփում.....	26
Հավելված 1: ԼԳՏՏ անձանց հետ անցկացվող խորին հարցազրույցի հարցաշար	27
Հավելված 2: Հարցաշար ֆոկլուս խմբային հարցազրույցների համար	30

Հապավումներ և հասկացությունների մեկնաբանություն

ԼԳՏ	Լեսբուհի (կին նույնասեռական), գեյ (տղամարդ նույնասեռական), բիսեքսուալ (երկսեռական), տրանսգենդեր (գենդերափոխ)
ԳԳՏ	Գեյ, բիսեքսուալ, տրանսգենդեր
SUS	Տղամարդու հետ սեռահարաբերություն ունեցող տղամարդ
ԿՍԿ	Կնոջ հետ սեռահարաբերություն ունեցող կին
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
Սեռական կողմնորոշում	Յուրաքանչյուր անձի զգացմունքային, հուզական, զգայական, ինտիմ և սեռական հակումը որոշակի սեռի այլ անձի հանդեպ
Նույնասեռական	Անձ, որին բնորոշ է զգացմունքային, հուզական, զգայական, ինտիմ և սեռական հակում նույն սեռի այլ անձի նկատմամբ
Տարասեռական	Անձ, որին բնորոշ է զգացմունքային, հուզական, զգայական, ինտիմ և սեռական հակում հակառակ սեռի այլ անձի նկատմամբ
Երկսեռական	Անձ, որին բնորոշ է զգացմունքային, հուզական, զգայական, ինտիմ և սեռական հակում ինչպես նույն, այնպես էլ հակառակ սեռի այլ անձի նկատմամբ
Գենդերային ինքնություն	Յուրաքանչյուր անձի ներքին և անհատական ընկալումը այն դերերի, վարքի, գործողությունների վերաբերյալ, որը հասարակության կողմից բնորոշվում է կնոջը և տղամարդուն: Անձի գենդերային ինքնությունը կարող է տարբերվել այն սեռից, որը որոշվում է ծննդի պահին
Գենդերափոխ	Անձ, որի ինքնությունը կամ արտաքինը տարբերվում է իր կենսաբանական սեռին բնորոշ դերերի, վարքի, գործողությունների վերաբերյալ հասարակության մեջ գոյություն ունեցող կարծրատիպային սպասումներից
Հոմոֆոբիա	(Հոմո - նույն, ֆոբիա - վախ) Բացասական վերաբերմունք և զգացողություններ նույասեռականության նկատմամբ կամ այն անձանց նկատմամբ, ովքեր նույնականացվում կամ ընկալվում են որպես նույնասեռական

Ներածություն

Նույնասեռականությունը մարդու սեռականության տեսակներից է, որը հիմնվում է նույնասեռական կողմնորոշման (սեռական հակում միևնույն սեռի անձանց հանդեպ), նույնասեռական նույնականացման (անձի սեփական ընկալումը որպես նույնասեռական կողմնորոշում ունեցողի) և նույնասեռական վարքի (միևնույն սեռի ներկայացուցչի հետ սեռական հարաբերության փորձ) վրա¹: Այն գոյություն է ունեցել մարդկության պատմության ամբողջ ընթացքում, սակայն յուրաքանչյուր ժամանակահատվածում, յուրաքանչյուր երկրի հասարակության կողմից ընկալվել և մեկնաբանվել է յուրովի: Ներկայումս աշխարհի որոշ երկրներում նույնասեռականությունն արգելվում է: Նույնիսկ կան երկրներ (Սաուդյան Արաբիա, Իրան, Եմեն, Սուդան, Մավրիտանիա և այլն), որտեղ նույնասեռականներին հետապնդում, ձերբակալում կամ մահապատժի են դատապարտում: Միաժամանակ աշխարհի մի շարք երկրներում այս խումբը պաշտպանված է օրենքով և ստանում է պետության կողմից աջակցություն իր կարիքներին համապատասխան (Բելգիա, Իսպանիա, Նորվեգիա, Չիլի, Կանադա, Գերմանիա և այլն):

Ժողովրդավարության ուղին բռնած Հայաստանը միացել է ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի՝ Մարդու իրավունքների հռչակագրի 60-ամյակին նվիրված նստաշրջանի ընթացքում ընդունված «Սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության» վերաբերյալ հայտարարությանը, «Հոմոֆոբիայի դեմ պայքարի միջազգային օրվան» նվիրված ԵՄ դեկլարացիային, ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդում Վիեննայի դեկլարացիայի և գործողությունների ծրագրի քննման և իրականացման ԵՄ հռչակագրին, ինչպես նաև ԵԽ-ի Նախարարների կոմիտեի հանձնարարականները անդամ պետություններին սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիման վրա խտրականության վերացման միջոցների վերաբերյալ: Ըստ այս փաստաթղթերի՝ մեր երկիրը պատրաստակամություն է հայտնում բացառելու ԼԳԲՏ անձանց հանդեպ ցանկացած բռնություն, քննադատում է սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության վրա հիմնված խտրականությունը, մեկուսացումը, պիտակավորումը և այլն, ինչպես նաև դատապարտում է սպանությունները, պատիժները, տանջանքները, ագրեսիան և տնտեսական, սոցիալական ու մշակութային իրավունքներից զրկելը: Սակայն հարկ է նշել, որ այս փաստաթղթերը պարտադիր ուժ չեն կրում, և ՀՀ կառավարությունը կամ որևիցե այլ կառույց պարտականություններ չունեն դրանց իրականացման համար:

Այսպիսով՝ առաջին հայացքից թվում է, թե ՀՀ կառավարությունն ապահովում է իր քաղաքացիների իրավահավասարությունն ու հիմնարար ազատությունները: Մինչդեռ իրականում, ԼԳԲՏ անձիք մինչ օրս հանդիպում են անհանդուրժողական ու խտրական

¹ Հնարավոր է անձը ունենա նույնասեռական կողմնորոշում, սակայն չունենա համապատասխան նույնականացում և/կամ չորսևորի նույնասեռական վարք:

վերաբերմունքի, որոնք ժամանակ առ ժամանակ իսկապես վտանգավոր դրսևորումներ են ունենում:

«Մենք և մեր իրավունքները» ծրագրի շրջանակներում իրականացված սոցիոլոգիական ուսումնասիրության հետազոտական հարցերն են.

- ԼԳԲՏ անձանց նկատմամբ խտրականության և իրավունքների ոտնահարման ինչպիսի՞ դրսևորումներ են առկա Հայաստանի Հանրապետությունում
- Իրավունքների ոտնահարման և խտրականության դրսևորումները ինչպիսի՞ առանձնահատկություններ են կրում կախված ոլորտից (ընտանիք, բարեկամական, ընկերական շրջապատ, մասնագիտական-աշխատանքային շրջանակներ, կրթության և առողջապահության ոլորտներ, ՁԼՍ, իրավապահ մարմիններ, զինվորական ծառայություն, կալանավայրեր, եկեղեցի, հասարակական և ժամանցի վայրեր)
- Ինչպիսի՞ն է ԼԳԲՏ անձանց իրավունքների պաշտպանության հետ կապված իրավիճակը Հայաստանի Հանրապետությունում

Ուսումնասիրության արդյունքներն ամփոփված են տվյալ հաշվետվության մեջ: Առաջին մասում ներկայացված է հետազոտության մեթոդաբանության համառոտ նկարագրությունը: Այնուհետև տրվում է ԼԳԲՏ իրավունքների հետ կապված իրավիճակի ընդհանուր նկարագիրը, այդ թվում՝ ԼԳԲՏ անձանց պատկերացումները սեփական իրավունքների մասին, նրանց կարծիքները խտրական վերաբերմունքի և հոմոֆոբ վարքի դրսևորումների վերաբերյալ՝ Հայաստանի տարբեր շրջաններում, ինչպես նաև Հայաստան - այլ երկրներ համեմատության մեջ: «ԼԳԲՏ անձանց նկատմամբ վերաբերմունքը կոնկրետ ոլորտներում, անհանդուրժողականության և խտրականության դրսևորումները» բաժնում քննարկվում են ԼԳԲՏ անձանց հանդեպ վերաբերմունքն ու իրավունքների ոտնահարման դրսևորումներն ընտանիքում, աշխատավայրում, կրթական հաստատություններում, ՁԼՍ-ներում և այլուր, և արվում են համապատասխան եզրակացություններ: Որպես էական խնդիրներ՝ առանձնակի վերլուծվում են ԼԳԲՏ անձանց առողջությանն առնչվող հիմնախնդիրները: Քննության են առնվել նաև գենդերային ինքնության և սեռական կողմնորոշման արտահայտման ինքնասահմանափակման գործոնները: Վերջում ներկայացվում են սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության վրա հիմնված խտրականության նվազեցման ուղիները, որոնք առաջարկվել են հարցվողների կողմից:

Մեթոդաբանություն

Ծրագրի շրջանակներում իրականացվել է սոցիոլոգիական ուսումնասիրություն, որի նպատակն է բացահայտել, թե Հայաստանում այսօր որքանով են պաշտպանված ԼԳԲՏ իրավունքները: Հետազոտությունն ուղղված է պարզելու խտրականության և անհանդուրժողականության դրսևորումները՝

1. առօրյա կյանքում և մասնագիտական գործունեության մեջ,
2. ֆորմալ և ոչ ֆորմալ փոխհարաբերություններում,
3. առողջապահական, կրթական, տեղեկատվական, իրավապաշտպան և այլ ինստիտուտների կողմից:

Տեղեկատվության հավաքման մեթոդների նկարագրություն

Հետազոտությունն իրականացվել է որակական մեթոդով, ինչը հնարավորություն է տվել խնդրի վերաբերյալ ստանալ ամբողջական բովանդակային տեղեկատվություն:

- *Իրականացվել է փաստաթղթերի բովանդակային վերլուծություն*, որի ընթացքում ուսումնասիրվել են ԼԳԲՏ անձանց առնչվող գրականություն, հայկական էլեկտրոնային մամուլի անդրադարձները երևույթին, ինչպես նաև ԼԳԲՏ իրավունքների վերաբերյալ տեղական և միջազգային իրավական փաստաթղթերը:

- Որպես տեղեկատվության ստացման հիմնական միջոց *կիրառվել է խորին հարցազրույցի մեթոդը*²: ԼԳԲՏ անձանց հետ անցկացված անհատական խորին հարցազրույցներում առանձին դեպքերի քննարկման ընթացքում դուրս է բերվել թաքնված և խորքային տեղեկատվություն: Մասնավոր դեպքերի ընդհանրացման արդյունքում դուրս են բերվել օրինաչափություններ: Որպես հարցազրույցների անցկացման գործիք, կիրառվել է Հավելված 1-ում ներկայացված հարցաշարը, որի հիմնական հարցերը ձևակերպվել են նախապես, սակայն աշխատանքների ընթացքում ձևափոխվել են՝ յուրաքանչյուր դեպքին համապատասխան: Տեղեկատվության հավաստիության և վստահելիության բարձրացման նպատակով հարցազրույցավարներն աշխատել են ստեղծել վստահության անկաշկանդ մթնոլորտ:

- ԼԳԲՏ անձանց հետ *անց են կացվել նաև ֆոկլուս խմբային հարցազրույցներ*³: Խմբային քննարկումների ժամանակ մասնակիցներն արտահայտել են իրենց կարծիքները, որոնց

² Խորին հարցազրույցը դեմ առ դեմ իրականացված հարցազրույցն է, որն անց է կացվում ազատ զրույցի տեսքով՝ **բաց հարցերով**, որի համար առկա է նախապես մշակված հարցաշարի բլոկեր, իսկ կոնկրետ հարցադրումները ձևակերպվում են տեղում՝ իրավիճակին համապատասխան: Այն ձկուն է և դիմամիկ: Մեթոդը ենթադրում է անձի սոցիալական աշխարհի բազմակողմանի և խոր ուսումնասիրություն, ուղղված է հարցվողների կյանքը, կենսափորձն ու իրավիճակը իրենց իսկ տեսանկյունից, իրենց իսկ բառերով հասկանալուն ու մեկնաբանելուն (Rubin H.J., Rubin I.S., 1995, Qualitative interviewing: The art of Hearing Data. SAGE Publications, Inc.):

³ Ֆոկլուս խմբային հարցազրույցը ենթադրում է որոշակի հարցադրումների շուրջ խմբային քննարկում (8-12 հոգի), որը կազմակերպվում և ուղղորդվում է հետազոտողի (մոդերատորի) կողմից: Այս դեպքում հարցազրույցի մասնակիցների կողմից տրված պատասխաններն առաջ են գալիս իրենց խմբային ասոցիացիաների արդյունքում (Mullings C. Curs guide/Group interviewing. 1985, British Library Board)

բախման արդյունքում ստացվել է ավելի հարուստ և պարզաբանված տեղեկատվություն: Խմբային հարցման հարցաշարը ներկայացված է Հավելված 2-ում:

Հարցվողների ընտրության մեթոդի նկարագրություն

Խորին և ֆոկուս խմբային հարցազրույցներն անց են կացվել LQFS անձանց հետ: Կառուցվել է տիպային ընտրանք: Խորին հարցազրույցների համար տիպերի առանձնացման չափանիշ է սահմանվել սեռական կողմնորոշումը/գենդերային ինքնությունը, իսկ ֆոկուս խմբերի համար՝ ֆիզիկական սեռը: Նպատակահարմար է համարվել անցկացնել երեքական ֆոկուս խմբային հարցազրույց իգական և արական սեռի ներկայացուցիչների հետ: Խորին հարցազրույցներ են անցկացվել մինչև հինգ անձի հետ՝ հիմնվելով նրանց սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության վրա: Ընտրության նպատակով առանձնացված տիպերը և հարցվածների քանակական պատկերը ներկայացված են Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

Հարցման տեսակ	Ընտրության նպատակով առանձնացված տիպեր և հարցումների / հարցված անձանց թիվ					
Ֆոկուս խմբային հարցազրույց	Արական – 3 ֆոկուս խումբ, մասնակիցներ – 9, 8, 12 հոգի			Իգական – 3 ֆոկուս խումբ, մասնակիցներ – 9, 8, 8 հոգի		
Խորին հարցազրույց	նույնա-սեռական	երկ-սեռական	գենդերա-փոխ	նույնա-սեռական	երկ-սեռական	գենդերա-փոխ
Հարցվածների թիվ	5 հոգի	4 հոգի	2 հոգի	4 հոգի	2 հոգի	2 հոգի

Ուսումնասիրության համար կարևոր սկզբունք է հանդիսանում **հազեցվածությունը**, քանի որ որակական հետազոտության ժամանակ պետք է ապահովել «տիպային» ներկայացուցչություն: Որակական հետազոտություններում հարցվողների թվի սահմանումը ճկուն է և հիմնված է տեղեկատվության հազեցվածության սկզբունքի վրա: Այսինքն հարցազրույցները շարունակվում են այնքան ժամանակ, քանի դեռ հետազոտողը ստանում է նոր գաղափարներ և տեսակետներ: Նշված սկզբունքը հանգեցրել է ձևավորված որոշ տիպերի շրջանակներում հարցվողների քանակի ավելացմանը կամ նվազեցմանը:

Հարցվողների ընտրության եղանակը: Հարցվողների ընտրության համար կիրառվել է «ձնակույտի» մեթոդը⁴: Այն իրականացվել է հետևյալ ընթացակարգով. առաջին հարցազրույցների ընթացքում հարցվողներին խնդրվել է նշել այլ մարդկանց անուններ, ովքեր ևս ընդգրկված են ուսումնասիրվող թեմատիկայում: Յուրաքանչյուր հարցվող իր սոցիալական ցանցից/շրջապատից նշել է մի քանի հոգու, որոնք իրենց հերթին նշել են այլ մարդկանց անուններ, և այդպես շարունակ: Արդյունքում ստացվել է հավանական

⁴ Ձնակույտի մեթոդը մի շարք տեխնիկաների ամբողջություն է, որոնք թույլ են տալիս ձևավորել բնակչության հատուկ խումբ՝ վերջինիս ներկայացուցիչներին նախնական ցանկում ընդգրկելու ճանապարհով (Kish L., Survey Sampling. Wiley Classics Library, A Wiley Interscience Publication, 1995):

հարցվողների ցանկ, որից էլ ընտրվել են հարցվողները, և իրականացվել են հարցազրույցներ այնքան ժամանակ, մինչև ինֆորմացիան հասել է տեսական հագեցվածության:

Հետազոտության արդյունքները ենթարկվել են **բովանդակային վերլուծության**: Կատարվել է որակական վերլուծություն:

Ուսումնասիրության սահմանափակումները: Տվյալ հետազոտության մեթոդաբանության մշակման և իրականացման փուլերում փորձ է արվել ապահովել ուսումնասիրման օբյեկտի տիպային ներկայացուցչություն: Սակայն հետազոտության ընթացքը ցույց տվեց, որ բացի օբյեկտի ներկայացման, անհրաժեշտ է նաև այլ շահագրգիռ կողմերի՝ փորձագետների, որոշումներ կայացնողների, ինչպես նաև հասարակական կարծիքի ուսումնասիրություն: Հետազոտության համար որոշ առումով խոչընդոտ է հանդիսանում նաև ուսումնասիրվող **խմբի յուրահատկությունը**: Արդյունքում, որոշ դեպքերում մարդիկ խուսափել են հարցազրույցի մասնակցել՝ սեռական կողմնորոշումը թաքցնելու միտումից ելնելով: Դա առավել հաճախ դրսևորվել է կանանց շրջանում:

ԱՄԵՐԻԿԱՆԵՐԻ ԻՐԱՆԱՎԱՅՈՒՄԻ ՄԱՍԻՆ



1. ՀՀ-ում LԳԲՏ անձանց իրավունքների իրավիճակի ընդհանուր նկարագիրը

«Բոլոր մարդիկ հավասար են օրենքի առջև» ամրագրված է ՀՀ Սահմանադրության Հոդված 14.1-ում: Համաձայն Սահմանադրության տվյալ կետի՝ «Խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է»: ՀՀ յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է հարգելու դիմացինի իրավունքներն ու ազատությունները՝ անկախ ամեն ինչից: Իսկ ինչպե՞ս են ընկալում «իրավունք» հասկացությունը հարցման մասնակիցները:

1.1. Պատկերացումներ սեփական իրավունքների և պարտականությունների վերաբերյալ, LԳԲՏ նկատմամբ անհանդուրժողականության պատճառները

Իրավունքը մարդու ազատության հնարավորությունն է ունենալու իր ցանկացած ապրելակերպը, մտածողությունը, վարքը, գործողությունները, կյանքի նպատակներն և այլն, ինչը պարտավոր է ապահովել պետությունն իր յուրաքանչյուր քաղաքացու համար: Պետությունն այն ապահովում է օրենքի միջոցով: Օրենքը մի ուժ է, որը յուրաքանչյուր մարդու պետք է տա հնարավորություն ապրելու այնպես, ինչպես ինքն է ցանկանում՝ չխանգարելով մյուսներին: Յուրաքանչյուր ոք պետք է ունենա խոսքի, մտքի, դավանանքի, սեռական պատկանելության իրավունք, ինչը պետք է լինի լիակատար պաշտպանված:

Իրավունքների սահմանման մեջ համայնքի արական սեռի ներկայացուցիչների կարծիքները որոշ նրբություններով տարբերվում են իգական սեռի ներկայացուցիչների կարծիքներից: Երկու կարևոր հանգամանք, որոնք հարցազրույցների ընթացքում առավել հաճախ նշել են հարցված արական սեռի ներկայացուցիչները, եղել են՝

- չհակասել օրենքին,
- չխանգարել ուրիշներին:

Հարցված իգական սեռի ներկայացուցիչների համեմատ արական սեռի ներկայացուցիչների մոտ ավելի շատ է իրավունքին զուգահեռ կարևորվում պարտականությունը: Իգական սեռի ներկայացուցիչները «իրավունք» հասկացությունն նույնացնում են ազատության հետ. «...ես չեմ սիրում, երբ, որ ինձ թելադրում են ինչ անել, սիրում եմ ինքս որոշել՝ ինչ է ինձ պետք», «...իրավունքը մարդուն տալիս է լիակատար ապահովության զգացողություն, ճնշվածության բացակայություն»:

Իրենց իրավունքները LԳԲՏ անձիք չեն առանձնացնում այլոց իրավունքներից, ընդհակառակը, քննադատում են տարբերակման ցանկացած փորձ: Սեփական իրավունքների հարցում նույնպես հարցված արական սեռի ներկայացուցիչների կարծիքը որոշակիորեն տարբերվում է իգական սեռի ներկայացուցիչների կարծիքից: Առաջինները

իրենց պարագայում կարևորում են նաև հարմարվողականությունը՝ դիտարկելով այն որպես պարտականություն. «Պարտականությունը պիտի լինի այն, որ յուրաքանչյուրը գիտակցի, որ եթե շրջապատին դուր չի գալիս քո պահվածքը՝ անկախ քո սեռական կողմնորոշումից, պետք է ինչ-որ ձևով հարմարվես հասարակության հետ»: Նրանք շեշտում են, որ իրենք բոլորի նման պետք է աշխատեն՝ վճարելով հարկերը, գործեն օրենքի սահմաններում, հետևեն բարոյական նորմերին, չցուցաբերեն հակասոցիալական վարք, չհակասեն իրենց ֆիզիկական և սոցիալական միջավայրների պահանջներին (առաջին դեպքում այն կարող է լինել՝ չաղտոտել և պահպանել շրջակա միջավայրը, բնությունը, հասարակական գույքը և այլն, իսկ երկրորդ դեպքում՝ չհամբուրվել փողոցում, կոսմետիկ միջոցներ չօգտագործել այն միջավայրերում, որտեղ դա ընդունելի չէ և այլն): «Պետք է չհերքել շրջակա աշխարհը, քանի որ ապրում ենք մարդկանցով շրջապատված», «...չկարծել, որ ազատության կամ իրավունքների պաշտպանվածության դեպքում ամեն ինչ թույլատրելի է, ինչպես որ շատերն այժմ վարվում են»: Իգական սեռի ներկայացուցիչները նույնպես գտնում են, որ իրենք ունեն բոլոր այն իրավունքները, ինչ ունեն ուրիշները՝ լինելու սոցիալապես ակտիվ, մասնակցելու հասարակական միջոցառումների, պայքարելու հանուն հավասարության, ստանալու գիտելիքներ, աշխատելու և այլն: Սակայն նրանց մոտ թույլ է դրսևորվում պարտավորությունների և հասարակության հետ հաշվի նստելու կարևորումը: «Մենք իրավունք պիտի ունենանք փողոցում ազատ քայլելու, համբուրվելու, ցույց տալու մեր սերը, ամուսնանալու, այսինքն այն ամենը, ինչ անում են մյուսները»: Այնուամենայնիվ՝ ԼԳԲՏ անձիք իրենց իրավունքներ առնչությամբ նշում են հետևյալ կարևոր հանգամանքը, որ **իրենք իրավունք ունեն հասարակությունից մեկուսացված և օտարված չլինելու, ծաղրի չենթարկվելու, չհետապնդվելու, չհալածվելու, ընդունված լինելու**: Ապրել ոչ թե այնպես, ինչպես հարկադրված են, այլ այնպես, ինչպես իրենք կան:

Այսպիսով՝ ԼԳԲՏ անձիք, որպես 33 քաղաքացիներ, իրենց պաշտպանված չեն զգում, ինչը պայմանավորված է իրենց նկատմամբ դրսևորվող խտրական վերաբերմունքով:

Որո՞նք են խտրական վերաբերմունքի և անհանդուրժողականության հիմնական պատճառները: Ըստ հարցվողների՝ դա պայմանավորված է մարդկանց մտածողությամբ: Յուրաքանչյուր մարդ, իր կյանքի ընթացքում յուրացնում է հասարակության կողմից ընդունված նորմերը, իսկ այդ նորմերի շրջանակներում ձևավորվում է նրա մտածողությունը: Այդ յուրացումը կատարվում է դաստիարակության, կրթության կամ ավելի լայն ասած՝ սոցիալականացման արդյունքում: Նորմերը հանդիսանում են հասարակական կյանքի կարգավորման մեխանիզմներ և լինում են գրված (օրենքներ, իրավական փաստաթղթեր, կանոնակարգեր և այլն) և չգրված (ավանդույթ, բարքեր և այլն): Հայաստանում գրված նորմերը՝ օրենքները, չեն պայմանավորում խտրականություն ԼԳԲՏ անձանց հանդեպ, սակայն չեն երաշխավորում նաև նրանց իրավունքների պաշտպանությունը: Անհանդուրժողականությունն ավելի շուտ հենվում է չգրված նորմերի, ավանդույթների, սոցիալական հիշողության վրա: Այն արմատավորվել է Խորհրդային Միության

գաղափարախոսության արդյունքում: «...Սովետական միությունում նույնասեռականությունը համարվում էր քրեորեն հետապնդվող արարք, որի համար մարդկանց դատապարտում էին, ընդհուպ մինչև մահապատիժ»: Ինչ-որ չափով, հոմոֆոբիայի հիմքում դնում են նաև կրոնական արժեքները՝ նշելով, որ «...եթե Հայաստանում հիմնդրիզմ լիներ, չէին լինի հոմոֆոբներ»:

Ըստ հարցվածների՝ մարդիկ չեն կարող իրենց վարքը ճիշտ կառուցել ԼԳԲՏ անձանց նկատմամբ, քանի որ չունեն համապատասխան գիտելիքներ: Գիտելիքների բացակայության արդյունքում մարդն իրենից օտարում է այն, ինչը չի ճանաչում: Իսկ անծանոթությունն առաջացնում է վախ. « Մարդիկ չգիտեն նույնասեռականության պատճառների մասին՝ մտածում են, որ կարող են վարակվել»: Հաճախ ԼԳԲՏ իրավունքները չեն պաշտպանվում առանձին անձանց կողմից այն պատճառով, որ նրանք վախենում են հակադրվել հասարակական կարծիքին: Այսպիսով՝ ըստ հարցվածների, խտրականության նվազեցմանը կարելի է հասնել իրազեկման և կրթության ճանապարհով:

1.2. Անհանդուրժողականությունն ու խտրականությունը Հայաստանում (գյուղական-քաղաքային բնակավայրեր, Հայաստան - այլ երկրներ համեմատության մեջ)

ԼԳԲՏ անձանց հանդեպ խտրական վերաբերմունքը սկսվում է ընտանիքից: Ընտանիքի անդամների կողմից նրանց հանդեպ խտրականությունը դրսևորվում է շփումների դադարեցմամբ, տնից դուրս հանելով, նրանից հրաժարվելով: Այնուհետև խտրականությունը շարունակվում է կյանքի գրեթե բոլոր փուլերում ու իրավիճակներում՝ ուսում և աշխատանք, առողջապահություն և այլ ծառայությունների ստացում, ՁԼՄ-ներ, ժամանց և այլն: Քիչ չեն գաղտնիության (անանունության) սկզբունքի խախտման դեպքերը, որոնք ավելի հաճախ հանդիպում են առողջապահական հիմնարկներում, իրավապահ մարմիններում կամ զինկոմիսարիատներում:

Հասարակության անհանդուրժողականությունն առավել հաճախ դրսևորվում է հետևյալ կերպ՝ հեզմանք, ծաղր, վիրավորական արտահայտություններ, հայհոյանք, արհամարհանք: Ըստ հարցվողների՝ իրենք ավելի շատ խտրականության են ենթարկվում տղամարդկանց, քան կանանց կողմից: Փաստենք այն համոզմանքը, որ կին նույնասեռականներն ավելի ընդունված են, քան տղամարդ նույնասեռականները: Ընդ որում, եթե կին նույնասեռականների հանդեպ շրջապատի անհանդուրժողականությունն արտահայտվում է միայն բացառող կամ արհամարհական վարքով և տհաճ արտահայտություններով, ապա տղամարդ նույնասեռականների հանդեպ շատ դեպքերում կիրառվում է ֆիզիկական բռնություն: Ըստ հարցվողների՝ Հայաստանում լինում են ԼԳԲՏ անձանց բռնաբարության և անգամ սպանության դեպքեր:

Հարցազրույցների արդյունքում պարզ դարձավ, որ մինչ օրս համայնքի անդամները իրենց իրավունքների համար պայքարել են ինքնուրույն՝ փորձելով անձամբ լուծել ստեղծված խնդիրները: Շատ դեպքերում, հատկապես տղամարդ նույնասեռականները կռվի

են բռնվել: Հարցվողների մեծամասնությունը նշում է, որ երբևիցե չի դիմել ու չի դիմի ոստիկանությանը/իրավապահ մարմիններին իր իրավունքների պաշտպանության առնչությամբ, քանի որ վերջիններս ոչ միայն չեն լուծում ծագած խնդիրը, այլ նաև իրենք են նոր խնդիրներ ստեղծում: «Օրենքի պաշտպանները փողոցում քայլելիս անհիմն կանգնեցնում են, վիրավորական արտահայտություններով հարց ու փորձ անում, էլ ուր մնաց ես ինքս դիմեն իրենց, որ իմ իրավունքը պաշտպանի...»: Հարցվածներն իրենց իրավունքների պաշտպանության հարցում ավելի շատ վստահում են այն ՀԿ-ներին, որոնք իրենց գործունեությամբ առնչվում են մարդու իրավունքների, կանանց իրավունքների և նույնասեռականների իրավունքների հիմնահարցերին (Հելսինկյան ասոցիացիա, Կանանց ռեսուրսային կենտրոն, Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք և այլն), քան մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակին և/կամ իրավապահ մարմիններին:

Անհանդուրժողական և խտրական վերաբերմունքի դրսևորումները տարբերվում են՝ կախված երկրի զարգացվածության մակարդակից: **Որքան զարգացած է երկիրը, այնքան հանդուրժողականությունը բարձր է, իսկ մարդիկ՝ պաշտպանված:** Կան երկրներ, որտեղ նույնասեռականների հանդեպ կիրառվում է մահապատիժ, այլ երկրներում՝ ընդունված է ամուսնությունը: Յուրաքանչյուր երկրում, լինի այն զարգացած, թե ոչ, կան շատ հոմոֆոբներ, սակայն իրավական պետություններում ԼԳԲՏ անձիք պաշտպանված են օրենքով: ԼԳԲՏ իրավունքների պաշտպանության տեսանկյունից երկրները կարելի է բաժանել երեք խմբի՝

- երկրներ, որտեղ անձի սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության իրավունքը չի պաշտպանվում օրենքով կամ դատապարտվում է,
- երկրներ, որտեղ անձի սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության իրավունքը օրենքով չի սահմանափակվում, սակայն դրանց դեմ ուղղված գործողությունները չեն դատապարտվում օրենքով,
- երկրներ, որտեղ անձի սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության իրավունքը ամրագրված է օրենքով:

Հարցվողները Հայաստանը ներառել են երկրորդ խմբում: Այն նույնացնում են անդրկովկասյան, ասիական և հետխորհրդային երկրների հետ, որտեղ երևույթը չի ընդունվում ավանդույթային (բարոյական) կամ իրավական տեսանկյուններից: Առավել հաճախ նշել են Հայաստանի նմանությունը հարևան երկրների հետ՝ Պարսկաստան, Վրաստան, Ադրբեջան, իսկ երբեմն էլ Աֆղանստանի հետ՝ պարզաբանելով, որ բոլոր նշյալ երկրներում էլ տարբեր տիպի հալածանքների են ենթարկվում ԼԳԲՏ անձիք: «Այստեղ էլ նույն կովկասյան մտածողությունն է, կովկասցու չորանական մոտեցումը», «...միայն տարբերությունն այն է, որ Հայաստանում հրապարակայնորեն քարերով խփել, պլետներով դաղել չկա: Իհարկե ավելի վատ բաներ են արվում, բայց ոչ հրապարակավ»: Ի հակադրություն նշյալ երկրների՝ զարգացած ժողովրդավարական երկրներում (ԱՄՆ, Եվրոպական երկրներ, մասնավորապես՝ Յուլանդիա, Ֆրանսիա, Գերմանիա) օրենքն

ապահովում է բոլոր մարդկանց՝ այդ թվում նաև LԳԲՏ իրավունքների պաշտպանվածությունը:

Ինչ վերաբերում է Հայաստանի գյուղական և քաղաքային բնակավայրերում LԳԲՏ անձանց նկատմամբ խտրականության տարբերությանը, ապա հարցվողները համարում են, որ գյուղերում մարդիկ ավելի անհանդուրժող են, քան քաղաքներում: Պա բացատրվում է հիմնականում գյուղի համայնքային ապրելակերպով, որտեղ ավանդույթներն ունեն գերիշխող դեր: Պահպանողական և դանդաղ փոփոխվող արժեհամակարգ ունեցող հայկական գյուղերի LԳԲՏ անձինք ունեն քիչ թե շատ նորմալ ապրելու երկու հիմնական տարբերակ՝ ապրել թաքնված կամ հեռանալ մայրաքաղաք/այլ մեծ քաղաքներ:



2. ԼԳՔՏ անձանց նկատմամբ վերաբերմունքը կոնկրետ ոլորտներում, անհանդուրժողականության և խտրականության դրսևորումները

2.1. Ընտանիք, բարեկամական, ընկերական շրջապատ

ԼԳՔՏ կյանքում շատ կարևոր դեր է խաղում ընտանիքի/ընկերների կողմից իրենց սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության մասին իմանալ/չիմանալու և այն ընդունելու հանգամանքը: Սովորաբար նրանք, ում հաջողվում է պահպանել լավ հարաբերություններ ընտանիքի և/կամ ընկերների հետ, առավել հաջողակ և հանգիստ կյանքով են ապրում:

Ընտանիքի անդամի սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը բացահայտելուն ընտանիքը կարող է արձագանքել տարբեր ձևերով.

1. Կտրականապես չընդունել

- Տնից դուրս հանել
- Դադարեցնել աջակցել որևէ հարցում (էնոցիոնալ և/կամ ֆինանսական աջակցություն)
- Այլ ծայրահեղ ռեակցիաներ (սպանություն և այլն...), որի մասին նշում են շատերը, սակայն կոնկրետ օրինակ ոչ ոք չներկայացրեց՝ ուղղակի “լսել եմ”

2. Զցանկանալ համակերպվել, փորձել վերադարձնել “ճիշտ ուղի”

- Շփման սահմանափակում, հսկողության խստացում (փակի տակ պահել, ինտերնետից զրկել և այլն)
- Տանում են հոգեբանի/հոգեբույժի մոտ

3. Հասկանում են և ընդունում/համակերպվում. ընդունումը սովորաբար տեղի է ունենում աստիճանաբար, հաճախ՝ 1. և 2. կետերի փուլերն անցնելուց հետո:

Հաճախ անձի սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության մասին ընտանիքներում չգիտեն, կամ գիտեն ընտանիքի ոչ բոլոր անդամները: Որոշ դեպքերում ընտանիքի անդամները կարող են ենթադրել/զլխի ընկնել, սակայն “պաշտոնապես” համարվում է, որ չգիտեն այնքան ժամանակ, քանի դեռ անձը ինքը չի խոստովանել:

Ընտանիքի կողմից անձի սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը չընդունելն ունի մի քանի հիմնական պատճառ.

- սերնդի շարունակության անհնարիություն,
- վախ շրջապատի կարծիքից/վերաբերմունքից (հարևաններ, բարեկամներ, հասարակություն),
- առհասարակ բացասական վերաբերմունք երևույթի նկատմամբ:

Ովքեր չեն թաքցնում սեռական կողմնորոշումը/գենդերային ինքնությունն ու ընտանիքում խնդիր չունեն, հիմնականում դրա պատճառով առանձին ապրելու ձգտում չեն ունենում: Իսկ եթե ձգտում են առանձին ապրել, կամ արդեն ապրում են, ապա զուտ այն պատճառով, որ արդեն այն տարիքում են, որ կարող են ինքնուրույն ապրել սեփական կյանքով:

Հակառակ դրան, նրանք, ում սեռական կողմնորոշման/գենդերային ինքնության մասին ընտանիքում չգիտեն, կամ գիտեն ու չեն ընդունում, հիմնականում ձգտում են առանձին ապրել: Նրանք, ում սեռական կողմնորոշումը/գենդերային ինքնությունը ընտանիքի կողմից չի ընդունվում, հիմնականում արդեն առանձին են ապրում: Նման դեպքերում առանձին չապրելու հիմնական պատճառը ֆինանսական հնարավորությունների պակասն է:

Ընկերների կողմից LQFS անձին չընդունելն ունի մի քանի հիմնական պատճառ.

1. վախ, որ շրջապատում կմտածեն, թե ինքն էլ է նույն համայնքի ներկայացուցիչ,
2. կարծիք, թե նույնասեռականությունը վարակիչ է,
3. մտավախություն, որ կարող է իր հանդեպ սեռական ոտնձգության փորձեր արվեն:

Սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության բացահայտմանն ընկերները կարող են արձագանքել տարբեր ձևերով.

1. Կտրականապես չընդունել
 - Շփման դադարեցում
 - Ֆիզիկական ճնշում
2. Շարունակել շփվել՝ այնուամենայնիվ լիովին չընդունելով ընկերոջ սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը.
 - Փորձում են վերադարձնել “ճիշտ ուղի” - “Ինչ հիմարություններով ես զբաղվում, թարգը տուր, ամուսնացի...”
 - Ծաղր
3. Ընդունում են և շարունակում ընկերություն անել առանց որևէ վերապահումների. հիմնականում պատճառը լինում է այն, որ մինչև սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության մասին իմանալը, արդեն ճանաչում և հարգում են նրան:

LQFS անձիք իրենք են ընտրում իրենց ընկերական շրջապատն ու շփվում միայն այն մարդկանց հետ, ովքեր իրենց ընդունում են՝ դադարեցնելով շփումը մյուսների հետ: Ոմանք ընկերություն են անում միայն համայնքի անդամների հետ:

Բարեկամները կարող են ընդունել կամ չընդունել, շփվել կամ չշփվել նրա հետ: Հիմնականում համայնքի ներկայացուցիչները բարեկամների վերաբերմունքը կարևորում է այնքանով, որքանով դա մտահոգում է իրենց ծնողներին:

Ընտանիքում նրանք հիմնականում թաքցնում են իրենց սեռական կողմնորոշումը/գենդերային ինքնությունը.

- վախենալով, որ ընտանիքն իրենցից կհրաժարվի,
- վախենալով ընտանիքի անդամների հոմոֆոբ վերաբերմունքից (մինչև իսկ ֆիզիկական հաշվեհարդար),
- որովհետև չեն ցանկանում ցավ պատճառել ընտանիքի անդամներին:

Ընկերական շրջապատում սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը հիմնականում թաքցնում են, վախենալով, որ կարող են.

- կորցնել ընկերներին,

- դառնալ ծաղրի առարկա:

Պետք է նշել, որ ԼԳԲՏ անձանց համար ընտանիքի անդամներից սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը թաքցնելու արդյունքում առաջացած ամենամեծ խնդիրներից է պարտադրված ամուսնությունը կամ ամուսնության թեմայով առաջացած վեճերը: Որոշ դեպքերում նրանք ամուսնանում են, սակայն շարունակում են ունենալ նույնասեռ հարաբերություններ: Երբեմն էլ տղամարդ նույնասեռականներն ու կին նույնասեռականները ներքին պայմանավորվածություն են ձեռք բերում “ընտանիք” ստեղծելու, սակայն յուրաքանչյուրը շարունակում է ապրել իր կյանքով: Երկու դեպքում էլ մնան ընտանիքները, որպես կանոն, երկար չեն պահպանվում: **Կարելի է ենթադրել, որ որքան շատ են հարկադրված ամուսնությունները, այնքան մեծ է ամուսնալուծությունների թիվը:**

2.2. Մասնագիտական-աշխատանքային շրջանակներ

Այն ԼԳԲՏ անձիք, ուն արտաքինը, կամ պահվածքն տարբերվում է հասարակության ընդհանուր պատկերացումներից, հիմնականում դժվարություններ են ունենում աշխատանքի ընդունվելիս:

Հաճախ, երբ աշխատավայրում ի սկզբանե տեղյակ չեն լինում աշխատակցի սեռական կողմնորոշման/գենդերային ինքնության մասին, իսկ այնուհետև տեղեկանում են, վերջինիս հեռացում են աշխատանքից, կամ էլ ստեղծում են այնպիսի պայմաններ, որ նա ինքնակամ հեռանա: Սակայն հարկ է նշել, որ որոշ նույնասեռականներ, իրենց սեռական կողմնորոշումը աշխատավայրերում չթաքցնելով հանդերձ, կարողանում են զերծ մնալ դրա հետ կապված խնդիրներից:

Ընդհանրապես աշխատավայրում ԼԳԲՏ նկատմամբ վերաբերմունքը կախված է նաև ոլորտից. պետական հաստատություններում, կրթական ոլորտում ԼԳԲՏ աշխատակից ունենալն անընդունելի է, իսկ մասնավոր ընկերություններում վերաբերմունքը մեծապես պայմանավորված է կոնկրետ ղեկավարի/տնօրենի վերաբերմունքով: Շատ ԼԳԲՏ անձիք աշխատում են սպասարկման/ժամանցային ոլորտներում: Միջազգային կազմակերպություններում, ինչպես նաև օտարերկրացիների ու սփյուռքահայերի կողմից կառավարվող ընկերություններում մոտեցումը շատ ավելի հանդուրժողական է:

Այսպիսով՝ աշխատավայրերում ԼԳԲՏ-ի հանդեպ անհանդուրժողականությունը պայմանավորված է հետևյալ գործոններով.

- ԼԳԲՏ-ի անձնային հատկանիշներ,
- աշխատանքի բնագավառ, տեսակ, ոլորտ,
- կազմակերպության/հաստատության սեկտոր՝ պետական, մասնավոր կամ միջազգային,
- տնօրենի վերաբերմունք, դրվածք,
- գործընկերների աշխարհայացք (պայմանավորված ծննդավայրով, աշխատանքի բնույթով, մասնագիտությամբ, տարիքով):

2.3. Կրթական հաստատություններ. դպրոց, բուհ

Դպրոցական տարիներին համայնքի անդամների նկատմամբ վերաբերմունքը հիմնականում պայմանավորված է վերջիններիս արտաքինով ու պահվածքով: Այս տարիքում, իրականում ամբողջովին չի գիտակցվում սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը. ոմանք վերջնականապես գիտակցում են իրենց սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը ավելի հասուն տարիքում: Հիմնականում խտրականության զոհ են դառնում առավել «կանացի» արտաքինով ու պահվածքով տղաներն ու առավել «տղայական» աղջիկները, որոնք միշտ չէ որ ԼԳԲՏ անձիք են: Աշակերտների կողմից խտրականությունը կարող է դրսևորվել ծաղրի (երեխային դիմում են “ղզիկ”, “գյալըբոկ”, “ղզողլան” կամ այլ պիտակներով), չչփվելու, երբեմն ֆիզիկական ճնշումների ձևով, իսկ ուսուցիչների կողմից՝ այլ աշակերտների մոտ անզգույշ, երեխայի համար վիրավորական/ճնշող արտահայտություններ թույլ տալով: Այդ տարիքից սկսած անձը սկսում է օտարվել շրջապատից: Հետագայում շատ դեպքերում նրանք պարզապես խուսափում են սեռական կողմնորոշման/գենդերային ինքնության մասին բարձրաձայնել:

Բուհերում ԼԳԲՏ անձանց նկատմամբ խտրականությունն ավելի հստակ դրսևորումներ է ստանում: Ընդհանուր կարծիքն այն է, որ տղաների նկատմամբ ճնշումն ավելի ուժեղ է, քան աղջիկների: Այսպես՝ ԳԲՏ տղաները հաճախ ուսման ամբողջ ընթացքում շփվում են միայն աղջիկների հետ, քանի որ տարասեռական տղաներն աշխատում են բացարձակ ոչ մի շփում չունենալ վերջիններիս հետ: Դա կարող է արտահայտվել նրա ձեռք տված իրին չդիպչելով, միևնույն նստարանին չնստելով, բարև չտալով և այլն: Նրանք հաճախ դառնում են ծաղրի, իսկ երբեմն էլ ֆիզիկական ճնշումների զոհ:

Բուհերում հանդիպում են նաև խտրականության դեպքեր դասախոսների և բուհական ղեկավարության կողմից՝ դարձյալ հիմնականում այն ուսանողների հանդեպ, ում արտաքինը, կամ պահվածքը տարբերվում է և տեղի է տալիս այլ անձանց կատարել ենթադրություններ տվյալ անձի սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության վերաբերյալ: Դասախոսների կողմից հնարավոր է առավել խիստ վերաբերմունք, քան այլ ուսանողների հանդեպ, խտրականություն քննությունների ժամանակ, ինչպես նաև վիրավորական կամ ճնշող բնույթի արտահայտություններ ողջ լսարանի առաջ: Եղել են անզամ բուհից հեռացման դեպքեր:

Բացի այդ բուհերում խտրական վերաբերմունք են ցույց տալիս նաև այն տարասեռական ուսանողների հանդեպ, ովքեր քննարկումների կամ բանավեճերի ժամանակ դեմ չեն արտահայտվում ԼԳԲՏ անձանց նկատմամբ:

«Դասախոսն ինձ թույլ չտվեց նույնասեռականության վերաբերյալ դիպլոմային աշխատանք գրել՝ հիմնավորելով, որ կլինեմ ոչ օբյեկտիվ: Սակայն, եթե այդ տեսանկյունից նայենք, ուրեմն ոչ մի կին պետք է ֆեմինիզմի կամ գենդերային թեմաներով աշխատանք չգրի... »: Եղել են դեպքեր, երբ դասախոսը դեմ է եղել, որ ԼԳԲՏ ուսանողը սեռական

կողմնորոշմանը և գենդերային ինքնությանը վերաբերող թեմաներով կամ ԼԳԲՏ անձանց մասին կուրսային/դիպլոմային աշխատանք գրի կամ հետազոտություն կատարի:

2.4. Առողջապահություն

Երբեմն ԼԳԲՏ անձիք բժշկի դիմելիս չեն կարողանում ներկայացնել ամբողջ ճշմարտությունն իրենց սեռական փորձի մասին (ամոթից կամ խտրական վերաբերմունքի հանդիպելու վախից դրդված): Արդյունքում նրանք ստանում են ոչ լիարժեք կամ ոչ ճիշտ բուժում: Իրենց իսկ նշելով՝ բժիշկների կողմից խտրական վերաբերմունք ոչ շատ հաճախ, բայց հանդիպում է: Առողջապահական ծառայությունների հետ կապված կարևոր խնդիրներից է նաև անանունությունը և գաղտնիությունը չպահպանելը. *«Կան բժշկական հաստատություններ, որտեղ դիմում ես ասելով, որ գեյ ես, նորմալ են վարաբերվում, սակայն կան նաև այնպիսիք, որոնք գեյերի խնդիրներով են զբաղվում, տպավորություն են ստեղծել, թե իբր անանուն են աշխատում, սակայն խախտում են այդ սկզբունքը քիչ չի, նաև վատ են վերաբերվում»:* Այս ամենից ելնելով ԼԳԲՏ անձանց շատերն այցելում են միայն իրենց ծանոթ վստահելի բժիշկների:

2.5. Զանգվածային լրատվամիջոցներ (ԶԼՄ)

ԶԼՄ-ներում սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության թեման այսօր հանդիսանում է մոդայիկ և արդիական թեմաներից մեկը: ԶԼՄ-ների արձագանքներն հաճախ ունենում են ընդգծված խտրական բնույթ: Հաճախ այս թեմայով հրապարակվում են հարցազրույցներ և հոդվածներ, հեռարձակվում են հունդրային հաղորդումներ և ֆիլմեր, որոնց արդյունքում հասարակության մեջ սերմանվում են կարծրատիպեր և պիտակներ ԼԳԲՏ անձանց վերաբերյալ:

Այս առումով մտահոգիչ են հատկապես այսպես կոչված "հունդրային" հաղորդումներն ու ֆիլմերը, որոնցից շատերում առկա է բացահայտ ատելություն և ագրեսիա ԼԳԲՏ անձանց հանդեպ: Դրանց բացասական ազդեցությունն արդեն իսկ զգացնել է տալիս իրեն, այն առումով, որ այժմ գրեթե ամենուրեք, բավականին հաճախակի հնչում են սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության վերաբերյալ հեզոնական արտահայտություններ՝ վերցված այս հաղորդումներից ու ֆիլմերից: Սակայն մյուս կողմից, դրանք կարելի է պայմանականորեն գնահատել որպես դրական, քանի որ ամեն օր էկրանից այս հիմնահարցի մասին (թեկուզ հեռուստասերիալից) լսելը մարդկանց առիթ է տալիս մտածելու այդ մասին և երևույթն աստիճանաբար դառնում է "սովորական":

Մեկ այլ մտահոգիչ փաստ է նաև լրագրողների կողմից ԼԳԲՏ շահերը ոտնահարող կամ խեղաթյուրված տեղեկատվության տարածումը: Այսպես՝ համայնքի անդամներից շատերը նշում են, որ լրագրողների հետ հանդիպումից հետո, զարմանքով փաստել են, որ տպագրված նյութում փոփոխված են իրենց խոսքերը, իսկ իրենք ներկայացված են բացասական լույսի

ներքո: Հասարակությանը հրամցվող նյութերը հաճախ պատրաստվում են այնպես, որ ապահովեն տվյալ ՁԼՄ-ի բարձր վարկանիշը, և ոչ թե ներկայացնեն օբյեկտիվ հիմնավորված ու ամբողջական տեղեկատվություն հարցի շուրջ:

Ըստ հարցվողների՝ քիչ չեն նաև այն դեպքերը, երբ ՁԼՄ-ների SUS, ԿՍԿ աշխատակիցները, հասարակությունից իրենց սեռական կողմնորոշումը թաքցնելու և/կամ այդ հարցում իրենց հանդեպ կասկածները փարատելու նպատակով պատրաստում և հեռարձակում/հրապարակում են քննադատական նյութեր: Այսպիսով՝ քանի որ ՁԼՄ-ները հանդիսանում են երևույթների մասին պատկերացումներ ձևավորող միջոցներ, ԼԳԲՏ անձիք ՁԼՄ-ների նման գործողությունները որակում ենք որպես իրենց ուղղված սպառնալիք:

2.6. Իրավապահ մարմիններ, ոստիկանություն

Իրավապահ մարմիններն ու ոստիկանությունն այն օղակներն են, որոնց հետ համայնքի ներկայացուցիչները փորձում են հնարավորինս չառնչվել: Սեփական շահերի ոտնահարման դեպքում գրեթե ոչ մի ԼԳԲՏ չի դիմում իրավապահներին շահերը վերականգնելու համար, այն պարզ պատճառով, որ վախենում են իրավապահների հետ շփման արդյունքում նախկինի համեմատ ավելի շատ խնդիրներ ունենալուց՝ սկսած արհամարհական ու անհարգալից վերաբերմունքից, մինչև սպառնալիքներ ու ֆիզիկական բռնություն:

Հետազոտության արդյունքում հաճախակի նշվել է, որ ոստիկանությունում ԼԳԲՏ-ներից գումար են կորզում, որպեսզի տանը կան աշխատավայրում չհայտնեն վերջիններիս սեռական կողմնորոշման/գեներային ինքնության մասին: Երևույթը հաճախ պարբերական բնույթ է կրում՝ միևնույն անձինց ժամանակ առ ժամանակ գումար են պահանջում լռության դիմաց:

Հիմնականում նույնասեռ վարք դրսևորող տղաներին ոստիկանություն են տանում այսպես կոչված “գեյերի այգու” շրջակայքից՝ պատճառաբանելով, որ նրանք խախտում են հասարակական կարգը:

Չնայած այս ամենին, հարկ է նշել, որ եղել են դեպքեր, երբ ոստիկաններն այնուամենայնիվ պաշտպանել են համայնքի անդամների շահերը՝ թույլ չտալով այլ քաղաքացիներին կռվի բռնվել նրանց հետ:

2.7. Ձինվորական ծառայություն և կալանավայրեր

Ձինվորական ծառայություն

ԳԲՏ համար պարտադիր զինվորական ծառայությունը դառնում է ամենածանր փորձություններից այն դեպքում, երբ բացահայտվում է նրանց սեռական կողմնորոշումը կամ գեներային ինքնությունը: Ձինվորական կոմիսարիատում այն արտահայտվում է ինչպես վերաբերմունքի փոփոխությամբ, այնպես էլ ֆորմալ փաստաթղթերի ձևակերպմամբ: Բժշկական քննությունից հետո ԳԲՏ անձիք ազատվում են զինվորական ծառայությունից՝

համարվելով հոգեկան առողջության խնդիրներ ունեցող, որպես ախտորոշում նշելով՝ սեռական շեղում, անձի շեղում, ոչ ավանդական սեռական կողմնորոշում և այլն: Նման ախտորոշում ունենալով՝ այս անձիք հետագայում կարող են զրկվել մի շարք իրավունքներից, օրինակ՝ ավտոմեքենա վարելու իրավունքից: Բացի այդ, քիչ չեն այն դեպքերը, երբ համոզվելու համար, որ անձն ունի նույնասեռական կողմնորոշում, խախտվում է գաղտնիության սկզբունքը (զինկոմիսարիատից զանգահարում են զորակոչիկի ընտանիքի անդամներին կամ աշխատավայր):

Այն դեպքում, երբ ԳԲՏ-ները թաքցնում են իրենց սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը և անցնում զինվորական ծառայության, հետագայում դա գաղտնի պահելը դառնում է հույժ կարևոր նախապայման: Հակառակ դեպքում՝ «...*նրա կյանքը դժոխքի է վերածվում*»: Խտրականության ամենատարածված դրսևորումներն են մեկուսացումը, շահագործումն ու ֆիզիկական ճնշումները:

Մեկուսացում

Նույնասեռ կողմնորոշումը կամ գենդերափոխությունը ընկալվում է որպես անառողջ, պիղծ երևույթ, և համարվում է, որ նման անձի հետ շփվելիս, նրա հետ միևնույն իրերից օգտվելիս ինքդ էլ ես պղծվում: Եվս մեկ կարևոր հանգամանք է վախը: Եթե ոմանք այլ իրավիճակում կարող էին նորմալ շփվել ԳԲՏ անձանց հետ, ապա բանակային պայմաններում, նրանք դրանով կվտանգեն իրենց վիճակը՝ իրենք կարող են նույնպես համարվել համայնքի ներկայացուցիչ ու ենթարկվել հալածանքների: Արդյունքում ԳԲՏ անձիք մեկուսացվում են, առանձնացվում է նրանց սպասքն ու այլ պարագաները, ոչ ոք ձեռք չի տալիս նրանց իրերին, իրենք էլ իրավունք չունեն դիպչելու այլոց իրերին... «*ամբողջ չաստը ուտելիքը չի կերել, որովհետև կարողա ինչ-որ մեկինը լիներ էն ամանը, որով էդ գեյ տղենա կերել, տենց բոյկոտ են արել ու դրա համար էդ տղայի ամեն ինչը, սպասքը առանձնացրել են...*»: ԳԲՏ անձիք իրավունք չունեն օգտվելու ընդհանուր ճաշարանից, բաղնիքից: Անգամ նրանց բարևելը համարվում է պատվազուրկ արարք:

Շահագործում

Գաղտնիք չէ, որ բանակում տիրում է ուժային ռեժիմ և առավել անպաշտպան և խոցելի ծառայողները ստիպված են լինում ենթարկվել առավել "ուժեղներից", կատարել նրանց հրահանգները, մաքրություն անել և այլն: Ջորամասում ԳԲՏ-ի առկայության դեպքում վերջիններս ինքնաստիճան դառնում են "ամենախոցելի օղակը": Տվյալ պարագայում գումարվում է նաև այլ զինվորականների կողմից նրանց հանդեպ տածած անհանդուրժողական ու ծայրահեղ բացասական վերաբերմունքը, ինչի արդյունքում նրանք ծառայության ամբողջ ընթացքում հնարավոր է ենթարկվեն մյուս զինծառայողների քմահաճույքներին:

Ֆիզիկական ճնշումներ

Բոլոր իրավիճակներում հանդիպող ֆիզիկական հաշվեհարդարներից, կռիվներից ու ծեծից բացի, բանակին բնորոշ է նաև ֆիզիկական ճնշման ևս մեկ տեսակ՝ սեռական

նունձգությունները: Կանանց բացակայության պայմաններում տարասեռական զինծառայողներից ոմանք "օգտագործում են" նույնասեռականներից իրենց սեռական պահանջմունքների բավարարման նպատակով: Առկա են նաև բռնաբարությունների դեպքեր:

Բանակում ԳԲՏ անձանց նկատմամբ խտրականությունն իրականացվում է հիմնականում այլ զինծառայողների կողմից: Իսկ սպայական անձնակազմն աչք է փակում այս ամենի վրա:

Կալանավայրեր

ԳԲՏ հանդեպ վերաբերմունքն ու ընդհանուր առմամբ վերջիններիս վիճակը կալանավայրերում առավել մոտ է բանակայինին: Առավել հաճախ նշվող տարբերությունն այն է, որ այստեղ խտրականությունն ակտիվորեն իրականացվում է ինչպես այլ կալանավորների, այնպես էլ հսկիչների կողմից:

2.8. Եկեղեցի

Եկեղեցին չի ընդունում նույնասեռականությունն ու գենդերափոխությունը և դատապարտում է այն: Սակայն ըստ համայնքի ներկայացուցիչների խոսքերի՝ նույնասեռականների նկատմամբ ակնհայտ ագրեսիայի ու խտրականության դեպքերն եկեղեցում այդքան էլ տարածված չեն:

Շատ նույնասեռականներ պարբերաբար հաճախում են եկեղեցի և այնտեղ խնդիրներ չեն ունենում սեռական կողմնորոշման հետ կապված:

2.9. Հասարակական և ժամանցի վայրեր

Հասարակական վայրերում ԼԳԲՏ անձանց հանդեպ խտրականության ամենատարածված դրսևորումը հետևից խոսելն է, փսփսալը, հեզմական կատակներն ու ակնարկները: Քանի որ հասարակական վայրերում նշված համայնքի անդամների մեծամասնությունը խուսափում է որևէ կերպ դրսևորել իր սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը, հիմնականում խտրականության զոհ են դառնում կրկին արտաքինից տարբերվելու դեպքում: Հնարավոր է, որ բարձրաձայն վիրավորեն, կամ անգամ փորձեն ֆիզիկական հաշվեհարդար տեսնել:

Որքան ավելի է արտաքինը կամ պահվածքը բացահայտում սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը, այնքան ավելի լուրջ մասշտաբների կարող է հասնել խտրականության դրսևորումը: Այս պատճառով համայնքի որոշ ներկայացուցիչներ խիստ սահմանափակում են իրենց կենսական տարածքը (վայրեր ուր այցելում են, ժամանցային ակումբներ, խանութներ, տրանսպորտ և այլն) խնդիրներից խուսափելու նպատակով:

Հասարակական վայրերի գերակշռող մեծամասնությունում ԼԳԲՏ անձիք չեն կարող ազատ զգալ և պահել իրենց այնպես, ինչպես հասարակության մյուս անդամները: Նման

դեպքերում նրանց կարող են դուրս հանել տվյալ վայրից, զգուշացնել, որ այլևս չկրկնվի կամ պարզապես վեճի բռնվել:

Իրականում շատ ԼԳԲՏ անձիք գտնում են, որ այսպես թե այնպես, պետք է հաշվի նստել այն հասարակության հետ, որում ապրում են, և կարիք չկա հասարակական վայրերում բացահայտ դրսևորելու իրենց ինքնությունը, իրար ձեռք բռնելու, համբուրվելու, և ամենուրեք բարձրաձայնելու իրենց սեռական կողմնորոշման և գեներային ինքնության մասին՝ այսպես կոչված "հեղափոխական նույնասեռականություն": Հարցվողները գտնում են, որ նման երևույթները ստվեր են գցում բոլորի վրա և իրենց բացասական ազդեցությունն են ունենում ողջ համայնքի համար:

2.10. Ծառայությունների ստացում

Ծառայություններից օգտվելիս ԼԳԲՏ անձանց նկատմամբ վերաբերմունքը գրեթե նույնն է, ինչ-որ հասարակական/ժամանցային վայրերում՝ նմանատիպ խոսակցություններ տվյալ անձի մեջքի ետևում, փսփսոց, հեզմանք և այլն: Առավել բացասական է վերաբերմունքը պետական հաստատություններում՝ զինկոմիսարիատ, ոստիկանության անձնագրային բաժին և այլն: Այստեղ հնարավոր է ոչ լիարժեք սպասարկում ու արհամարհական վերաբերմունք: Մասնավոր հատվածում ամեն ինչ կախված է կոնկրետ հաստատության տնօրինությունից կամ հաճախորդի հետ անմիջապես շփվող աշխատակցից: Այս պատճառով շատերն ունեն ծառայությունների ստացման իրենց նախընտրած վայրերն ու այլ վայրեր չեն հաճախում:

Բնակարանային հարցերում մեծամասամբ խնդիրը նոր շրջապատին, հարևանությանն հարմարվելն է: Սեռական կողմնորոշումը հիմնականում խոչընդոտ չի հանդիսանում բնակարան վարձակալելիս կամ գնելիս:

3. Գեներային ինքնության և սեռական կողմնորոշման արտահայտման ինքնասահմանափակման գործոնները և դրա հետևանքները

Խտրական վերաբերմունքից խուսափելու և շրջակա միջավայրին հարմարվելու նպատակով անձը հաճախ թաքցնում է իր սեռական կողմնորոշումը և գեներային ինքնությունը: Դա ունի իր դրական և բացասական կողմերը: Այն դեպքերում և այն միջավայրերում, որտեղ այս երևույթը չեն հանդուրժում, սեռական կողմնորոշումը հիմնականում գաղտնի է պահվում: Ոմանց համար գաղտնի պահելը հավասարազոր է խաբելուն, ուստի բարդ հոգեկան ապրումներ են ունենում բոլոր այն իրավիճակներում, երբ ստիպված են լինում “ստել”։ Սակայն ոմանք էլ գտնում են, որ իրենք ոչ թե թաքցնում են, այլ պարզապես չեն բարձրաձայնում այդ մասին. «... չեն թաքցնում առանձնապես, չեն ամաչում դրանից ու վատ չեն էլ զգում, բայց չեն էլ կարծում, որ մի հատ պլակատ պիտի վերցնեն ու փողոցներով ման գան ու գոռան, թե ես նույնասեռական եմ, որովհետև ես ոչ մի հետերոսեքսուալի (տարասեռականի) չեմ տեսել, որ փողոցով ման գա ու գոռա “ես հետերոսեքսուալ եմ”, ես ինչի՞ պիտի, գոռան, որ ես գեյ եմ»: Մեծամասամբ թաքցնում են աշխատավայրերում՝ աշխատանքը չկորցնելու համար, ինչպես նաև հասարակական վայրերում՝ տիպիկ իրավիճակներից խուսափելու համար (ոչ կոռեկտ արտահայտություններ, ծեծ, քաշքշուկ և այլն):

Ըստ հարցազրույցների արդյունքների՝ շրջապատի հետ խնդիրներ քիչ են ունենում հիմնականում այն LQFS անձիք, ում հաջողվում է գաղտնի պահել սեռական կողմնորոշումը և գեներային ինքնությունը (այսինքն՝ արտաքինից չեն տարբերվում): Նման դեպքերում նրանք նախ կարգավորում են իրենց հարաբերությունները այս կամ այն խմբում կամ ինստիտուտում, դրսևորում իրենց անձնային որակները, իսկ հետագայում, անհրաժեշտության դեպքում միայն նոր բացահայտվում: Սակայն այն դեպքերում, երբ տվյալ անձի արտաքին տեսքը հիմք է հանդիսանում այլ անձանց համար կատարելու ենթադրություններ տվյալ անձի սեռական կողմնորոշման և գեներային ինքնության վերաբերյալ, հասարակությունից մեկուսացվելու վտանգն անխուսափելի է: Զթաքցնելու դեպքում տվյալ անձիք ունենում են ոչ միայն հոգեբանական խնդիրներ, այլ նաև վտանգում են իրենց ու զուգընկերոջ անվտանգությունը:

Խտրականությունից պաշտպանված չլինելը (բացահայտվելու վտանգը, ամոթի և վախի զգացումները) երբեմն կարող է վտանգել LQFS անձի առողջությունը: Նրանց համար խնդիր է հանդիսանում դեղատնից պահպանակ, քուրք գնելը կամ բժիշկներից սեռավարակների վերաբերյալ տեղեկատվություն ստանալը: Այս հարցերում նրանք ավելի շատ վստահում են հասարակական կազմակերպություններին, որոնք իրականացնում են սեմինար/դասընթացներ սեռական առողջության պահպանման վերաբերյալ: Դասընթացներից, ինտերնետից կամ այլ աղբյուրներից սեռական կյանքի մասին

տեղեկատվության ստացման արդյունքում՝ ԼԳԲՏ-ների մոտ նվազում են սեռական ճանապարհով փոխանցվող վարակների տարածման ռիսկերը:

Սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը թաքցնելը բերում է ոչ միայն ֆիզիկական առողջության խնդիրների, այլ նաև հոգեբանական բարդությունների: Խնդիրն առավել սուր է արտահայտվում այն դեպքում, երբ անձի ինքնությունը գաղտնի է նրա ընտանիքի անդամներից: Նման իրավիճակի դրական արդյունքն այն է, որ տվյալ անձը չի զրկվում հարազատներից ու բնակության վայրից, սակայն արդյունքում նա հանգում է լուրջ հոգեբանական խնդիրների: Թաքցնելու արդյունքում նրանք դառնում են մարզինալ և վարում են երկակի կյանք:

Հոգեբանական լուրջ խնդիրներ են առաջանում նաև ԼԳԲՏ նկատմամբ հասարակության վերաբերմունքի արդյունքում: Անձի անմիջական փոքր և մեծ խմբերից մեկուսացման և օտարման հանգամանքը սթրես և ընկճախտ է առաջացնում յուրաքանչյուրի մոտ, քանի որ մարդը, լինելով սոցիալական էակ, միշտ էլ հասարակության հետ շփման կարիք ունի: Նման իրավիճակներում շատ մարդիկ չեն կարողանում հարմարման ուղի գտնել: Հարցվածներից ոմանք ունեցել են ինքնասպանության եթե ոչ փորձ, ապա զոհն են մտքեր: Իրավիճակից դուրս գալու համար նրանք խուսափում են դիմել հոգեբանի ծառայությանը՝ վստահության պակասի պատճառով (անանունությունը և գաղտնիությունը չպահպանելու վախ): Եղել են դեպքեր, երբ այցելել են հոգեբանի մոտ, սակայն հիմնականում ծնողների պարտադրմամբ: *«Ինձ տարան հոգեբանի մոտ խորհրդատվության՝ իբր թե այլ նպատակով: Հետո պարզվեց, որ նա ուզում է ինձ “բուժել” և փոխել իմ սեռական կողմնորոշումը: Նա ինձ սկսեց համոզել, որ դա հիվանդություն է ու պետք է բուժել: Ես ինքնստիճանում ինձ հիվանդ էի զգում: Սակայն հետո հասկացա, որ հնարավոր չէ փոխել ինքնությունս: Ես բոլորի նման առողջ եմ, միայն թե ես այսպիսին եմ, իսկ իրենք այնպիսին», «...որքան դժվար էր իմ համար, երբ հոգեբանն ինձ համոզում էր, որ պետք է հաճախել իր սեանսները, որ բուժվեմ... Ես ներքին կոնֆլիկտներ էի ապրում...ես գիտակցում էի, որ ես հիվանդ չեմ...»:* Հարցվողների գնահատմամբ՝ Հայաստանում բարձր պրոֆեսիոնալիզմ ունեցող հոգեբան գտնելը գրեթե անհնարին է, որոնք ոչ միայն չեն խորացնի առանց այն էլ բարդ հոգեվիճակը, այլ նաև կօգնեն հաղթահարել իրենց մի շարք խնդիրները:

Այսպիսով՝ անհանդուրժողական վերաբերմունքի արդյունքում համայնքի անդամները, եթե ոչ ֆիզիկապես, ապա զոհն են հոգեբանորեն օտարվում են հասարակությունից: Նրանք իրենց իրական իսկությունն արտահայտում են միայն իրենց միջավայրում (իրենց համար հատկացված վայրերում) կամ այն մարդկանց մոտ, ում կողմից չեն արժանանա քննադատման կամ խտրականության, հալածանքի կամ օտարման:

4. Սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության վրա հիմնված խտրականության նվազեցման ուղիները

Իրականացված հետազոտության արդյունքում պարզվեցին ինչպես այն ոլորտները, որտեղ առավել կարևոր է խտրականության նվազեցմանն ուղղված աշխատանքների իրականացումը, այնպես էլ միջոցները, որոնցով պետք է դրանք իրականացվեն: Ըստ հարցվողների՝ անհրաժեշտ է, մի կողմից, իրականացնել օրենսդրական բարեփոխումներ և հետևել դրանց իրականացման ընթացքին, մյուս կողմից, աշխատանքներ տանել տարբեր ոլորտներում և մակարդակներում՝ մարդկանց մտածողության փոփոխության ուղղությամբ:

Մտածողության փոփոխությանն ուղղված աշխատանքներ անհրաժեշտ է իրականացնել հետևյալն ոլորտներում/հաստատություններում՝

- Ոստիկանություն, իրավապահ մարմիններ,
- Առողջապահական հաստատություններ,
- Կրթական հաստատություններ-հանրակրթական դպրոցներ, բուհեր,
- ՁԼՄ-ներ,
- Մասնավոր սեկտոր (խանութներ, ժամանցային վայրեր և այլն):

Հարցվողները նշում են, որ հասարակական ինտեգրացիայի լավագույն միջոցը հասարակության տարբեր խմբերին սեռական կողմնորոշման/գենդերային ինքնության և իրավունքների վերաբերյալ իրազեկվածության բարձրացումն է, որը կարող է իրականացվել հետևյալ միջոցներով՝

- ԼԳԲՏ անձանց հետ կազմակերպել և անցկացնել իրավունքների և պարտականությունների, սեռական առողջության և վարքի վերաբերյալ ուսուցումներ⁵,
- հանրակրթական դպրոցներում անցկացնել դասընթացներ՝ ապագա սերնդի մոտ հանդուրժողականության արմատավորման նպատակով⁶,
- տարբեր աշխատանքային և մասնագիտական խմբերում (ոստիկաններ, բժիշկներ, մանկավարժներ, պետական հիմնարկների աշխատակիցներ և այլն) իրականացնել կրթական կամ իրազեկման բարձրացմանն ուղղված դասընթացներ/սեմինարներ:
- ՁԼՄ-ներով հեռարձակել հեռուստահաղորդումներ, թոք-շոուներ և ֆիլմեր⁷, որոնցով հասարակությանը կներկայացվի գիտականորեն հիմնավորված և հավաստի

⁵ «Շրջակա միջավայրը փոխելու լավագույն միջոցը ինքնափոխումն է: Նախ, նույնասեռականը պետք է աշխատանք տանի իր վրա, ապացուցի իր վարքով, որ նա հակասոցիալական չէ...» «...սակայն մարդիկ կան, ովքեր հպարտանում են իրենց սպրեյակերպով, պետք չէ ոչինչ ապացուցել, պետք է պարզապես ապրել...»

⁶ «...հանրակրթական դպրոցներում պետք է մտցնել առարկա, որում կքննարկվի մարդու մասին ամեն ինչ՝ սեռից սկսած, վերջացրած պատմական զարգացումով, էվոլյուցիայի կենսաբանական և հոգևոր միտումներով: Պատմության և մշակույթի տեսակետից պետք է փորձել յուրաքանչյուրին ծանոթացնել “նույնասեռական” հասկացության հետ:

⁷ «Հեռուստահաղորդաշար մտցնել, որտեղ կներկայացվեն պատմության մեջ հայտնի այն անհատականությունների կենսագրությունները, որոնք ունեցել են նույնասեռական կողմնորոշում...»: «...կազմակերպել թոք-շոուներ, որտեղ հրավիրված կլինեն տարբեր մասնագիտությունների տեղ մարդիկ՝ հոգեբաններ, հոգեբույժներ, եկեղեցականներ... նույնիսկ եթե քննարկման ժամանակ հոգևորականն արտահայտվի բացասաբար, չէ՞ որ երկխոսության միջոցով է մարդու մոտ կասկած առաջանում և փորփրելու արդյունքում գտնում է ճշմարտությունը»:

տեղեկատվություն սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության վերաբերյալ, քննարկումների, բանավեճերի ընթացքում կհնչեն բազմապիսի կարծիքներ երևույթի վերաբերյալ և այլն:

Այնպիսի միջոցառումներ, ինչպիսիք են “գեյ-շքերթները”, հարցվողների գնահատմամբ դեռևս ժամանակավրեպ են և կարող են ավելի խորացնել անհանդուրժողականությունը:

Վերը ներկայացված միջոցառումները, ըստ հարցվողների, կմեծացնեն հասարակության կողմից “նույնասեռականություն” երևույթի ճանաչումն ու հանդուրժողականությունը, կնվազեցնեն խտրականությունն այն դեպքում, եթե դրանք արվեն ճիշտ, գրագետ և ժամանակին:



Ամփոփում

Ամփոփելով իրականացված ուսումնասիրության արդյունքները՝ այնուամենայնիվ հարկ է նշել, որ նախքան որևէ միջոցառում ձեռնարկելն անհրաժեշտ է իրականացնել հասարակական կարծիքի ուսումնասիրություն, որի նպատակը կլինի պարզել հասարակության վերաբերմունքը LԳԲՏ անձանց հանդեպ:

Խնդրի բազմակողմանի վերլուծության համար նպատակահարմար է նաև իրականացնել փորձագիտական հարցազրույցներ՝ բժիշկների, հոգեբանների, սոցիալական աշխատողների, սոցիոլոգների, ոստիկանների, իրավաբանների, հոգևորականների, մանկավարժների և այլ մասնագետների հետ:



Հավելված 1: ԼԳՔՏ անձանց հետ անցկացվող խորին հարցազրույցի հարցաշար

Պատկերացումներ սեփական իրավունքների և պարտավորությունների վերաբերյալ

1. Կխնդրեի մի նախադասությամբ բնորոշեք, թե ի՞նչ եք հասկանում՝ մարդու իրավունքներ ասելով:

2. Իսկ ինչպիսի՞ իրավունքներ և պարտականություններ ունեն ԼԳՔՏ անձիք: Որտեղի՞ց եք տեղեկացել Ձեր իրավունքների մասին:

3. Առհասարակ ի՞նչ ձևերով կարող է արտահայտվել ԼԳՔՏ անձանց իրավունքների ոտնահարումը:

4. Ո՞ր ոլորտներում է հիմնականում տեղի ունենում իրավունքների ոտնահարումը (առողջապահություն, կրթություն, ընտանիք, ծառայություններ և այլն):

5. Կարո՞ղ եք նշել դեպքեր, հանգամանքներ կամ ոլորտներ, որոնցում պետք է այդ իրավունքների պաշտպանության առնչությամբ աշխատանքներ արվեն: Ու՞մ կողմից: Ի՞նչ աշխատանք:

6. Եթե ունենայիք հնարավորություն, ապա ո՞ր ոլորտում և ինչպիսի՞ փոփոխություն կիրականացնեիք անհանդուրժողական վերաբերմունքը նվազեցնելու համար:

7. ԼԳՔՏ անձանց իրավունքների պաշտպանությանն ուղղված գործողությունները կարո՞ղ են ունենալ բացասական հետևանքներ խմբի համար, հասարակության համար: Իսկ որո՞նք են դրական հետևանքները:

ԼԳՔՏ իրավունքների պաշտպանության անհրաժեշտությունը և դրա խոչընդոտները Հայաստանում:

8. Ո՞ր երկրի հետ կհամեմատեիք Հայաստանը իրավունքների պաշտպանության/ ոտնահարման տեսանկյունից (մասնություններ և տարբերություններ): Ինչու՞:

9. Ինչ եք կարծում, ո՞րն է անհանդուրժողականության հիմնական պատճառը:

10. Հայաստանում մարդու մասին պատկերացում կազմում են՝ հաշվի առնելով մարդու արտաքինը, վարքը, ապրելակերպը, թե՞ մտածողությունը:

Խտրականության կամ անհանդուրժողականության դեպքեր

11. Ո՞ր հարցերում (ամուսնություն, պարզ շփումներ, արտահայտման ազատություն և այլն), ու՞մ կողմից, ինչպե՞ս և ի՞նչ պատճառով է Հայաստանում դրսևորվում խտրականություն ԼԳՔՏ անձանց հանդեպ (քննարկել ներքոհիշյալ յուրաքանչյուր մակարդակում օրինակներով)

- ընտանիքում,
- բարեկամական, ընկերական շրջապատում,
- մասնագիտական-աշխատանքային շրջանակներում, աշխատանքի ընդունվել
- գյուղում/քաղաքում-դիտարկել դրանց տարբերությունները,
- հասարակական վայրերում, հանգիստ
- կրթական հաստատություններում-դպրոց, բուհ (քննարկել նաև թեմայի ուսումնասիրության ժամանակ երբևիցե խտրականության հանդիպման դեպք),
- առողջապահական հիմնարկներում-բուժօգնության ստացում,
- բանակում կամ կալանավայրում,
- եկեղեցում,
- ՁԼՄ-ների կողմից,
- իրավապահ մարմինների կողմից,

- ծառայությունների ստացման ընթացքում-կոմունալ վճարումներ, բնակարանի վարձակալություն, առք ու վաճառք և այլն:

12. Ի՞նչ քայլեր եք կատարել կամ ու՞մ եք դիմել Ձեր իրավունքները պաշտպանելու համար: Ո՞րն էր Ձեր այդ վարքագծի պատճառը: Եթե երբևէ Ձեր իրավունքները ոտնահարվեց, ի՞նչ կանեք:

13. Ֆիզիկական կամ հոգեբական բռնության պատճառով երբևէ դիմե՞լ եք ոստիկանություն: Եթե ոչ, ապա ինչու: Եթե այո, ապա ինչպիսի՞ն էր ոստիկանության արձագանքը:

Առողջապահություն

14. Սեռական առողջության հետ կապված ինչպիսի՞ խնդիրների և դժվարությունների հետ են առնչվում LQFS անձիք՝ ռիսկերը, խտրականություն, վախ (բացահայտման, հալածանքների) կամ այլ: Կարո՞ղ եք որևէ դեպք հիշել, որը տեղի է ունեցել ձեզ ծանոթ LQFS անձի հետ:

15. Ինչպիսի՞ խնդիրների կամ դժվարությունների են հանդիպում LQFS անձինք կապված հոգեկան առողջության ոլորտի հետ (ներառյալ հոգեւոցիալական աջակցության ծառայությունները): Կարո՞ղ եք որևէ դեպք հիշել, որը տեղի է ունեցել ձեզ ծանոթ LQFS անձի հետ:

Կենցաղ, սոցիալական շրջապատ և դրա հետ կապված հիմնախնդիրներ (եթե հարցվողը դժվարանա պատասխանել, ապա հարցերը վերածնակերպել՝ նկարագրված իրավիճակներում տեղադրելով LQFS այլ անձիք)

16. Մի փոքր պատմեք Ձեր առօրյայի մասին: Ինչպե՞ս եք անցկացնում Ձեր ազատ ժամանակը:

17. Որտե՞ղ եք բնակվում (տարածքային առումով-ծննդավայր, սոցիալական շրջապատ-ընտանիքի անդամներ): Երբևէ Ձեր մոտ եղե՞լ է մտադրություն՝ ապրելու ծնողական ընտանիքից անկախ: Ինչու: Քանի՞ տարեկան էիք այդ ժամանակ: Ինչպե՞ս եք վարվել:

18. Արդյոք Ձեր ընտանիքի անդամները գիտե՞ն Ձեր սեռական կողմնորոշման/զենդեռային ինքնության մասին: Եթե այո, ապա ի՞նչ ձևով են իմացել այդ մասին: Ինչպիսի՞ն է նրանց վերաբերմունքը: Արդյոք այն փոփոխվե՞լ է:

19. Երբևէ ունեցե՞լ եք խնդիրներ կացարանի հետ կապված: Օրինակ՝ ցանկացել եք ինչ-որ տեղ բնակվել (ուսանողական հանրակացարան, գնել կամ վարձակալել տարածք), սակայն ինչ-ինչ պատճառներով չի հաջողվել: Նկարագրեք խնդրեմ, թե ո՞րն է եղել պատճառը: Փորձե՞լ եք արդյոք լուծել դրանք: Ինչպե՞ս: Եթե ոչ, ապա ինչու:

20. Ի՞նչ կրթություն ունեք: Սովորելու տարիներին երբևէ ունեցե՞լ եք խնդիրներ՝ պայմանավորված սեռական կողմնորոշման/զենդեռային ինքնությամբ: Նկարագրեք խնդրեմ այդ խնդիրները: Փորձե՞լ եք արդյոք լուծել դրանք: Ինչպե՞ս: Եթե ոչ, ապա ինչու:

21. Ինչո՞վ եք զբաղվում: Ունե՞ք մշտական զբաղմունք: Եթե այո (երբևէ աշխատել է), ապա երբևէ ունեցել եք խնդիրներ՝ պայմանավորված Ձեր սեռական կողմնորոշման/զենդեռային ինքնությամբ: Որո՞նք են այդ խնդիրները: Երբևէ դիմե՞լ եք աշխատանքի ընդունվելու համար: Նկարագրեք խնդրեմ, թե ի՞նչ է տեղի ունեցել: Ինչու: Փորձե՞լ եք արդյոք լուծել առաջացած խնդիրները: Ինչպե՞ս: Եթե ոչ, ապա ինչու:

22. Կարո՞ղ եք հիշել, թե երբ եք վերջին անգամ դիմել բժշկի՝ բժշկական խորհրդատվություն կամ բուժում ստանալու նպատակով: Ինչպիսի՞ վերաբերմունք է ցուցաբերվել: Ինչո՞վ էր պայմանավորված այդ վերաբերմունքը:

23. Կարո՞ղ եք հիշել, թե երբ եք վերջին անգամ գնացել եկեղեցի կամ մասնակցել եկեղեցական որևէ միջոցառման: Ի՞նչպիսի զգացողություն ունեիք: Ինչու: Եթե չեք գնացել, ապա ո՞րն է պատճառը:

24. Երբևէ խնդիր ունեցե՞լ եք՝ այս կամ այն հասարակական ծառայություններից օգտվելիս (օր. տեղական ինքնակառավարման մարմիններ, դատարաններ, հասարակական ժամանցի վայրեր, խանութներ, հասարակական տրանսպորտ, հանգստի վայր, լողավազան և այլն): Եթե այո, խնդրում ենք նկարագրել որևէ միջադեպ:

Գեներային ինքնության և սեռական կողմնորոշման արտահայտման ինքնասահմանափակման գործոնները

25. Եղե՞լ են դեպքեր, երբ Դուք թաքցրել եք Ձեր սեռական կողմնորոշումը/գեներային ինքնությունը կամ խուսափել եք բարձրաձայնել այդ մասին: Ո՞րն է եղել պատճառը: Իսկ Ձեր կարծիքով, ի՞նչ տեղի կունենար, եթե Դուք արտահայտվեիք: Ինչու՞ եք այդպես կարծում:

26. Կարո՞ղ եք հիշել այնպիսի դեպք/դեպքեր, երբ Դուք խուսափել եք հասարակական վայրում միևնույն սեռի Ձեր զուգընկերոջ հետ համբուրվելուց կամ ձեռք բռնելուց: Ինչո՞վ էր դա պայմանավորված:

27. Ե՞րբ եք Դուք Ձեզ ազատ զգում բացահայտ դրսևորվելու: Ինչու՞: Իսկ ի՞նչն է խանգարում Ձեզ ազատ արտահայտվելու:

28. Որո՞նք են սեռական կողմնորոշումը/գեներային ինքնությունը շրջապատում թաքցնելու առավելությունները: Իսկ որո՞նք են թերությունները:

Ընդհանուր տեղեկություններ

29. Ձեր տարիքը

30. Կրթությունը

31. Ֆիզիոլոգիական սեռը

32. Սոցիալական սեռը (գեներային ինքնությունը)

33. Ներկայումս ի՞նչ հարաբերությունների մեջ եք (նույնասեռ, տարասեռ և՛ նույնասեռ, և՛ տարասեռ)

Հավելված 2: Հարցաշար ֆոկուս խմբային հարցազրույցների համար

Պատկերացումներ սեփական իրավունքների և պարտավորությունների վերաբերյալ

1. Մեկ նախադասությամբ բնորոշեք, թե ի՞նչ եք հասկանում՝ մարդու իրավունքներ ասելով:
2. Իսկ ինչպիսի՞ իրավունքներ և պարտականություններ ունեն ԼԳԲՏ անձիք:
3. Առհասարակ ի՞նչ ձևերով կարող է արտահայտվել ԼԳԲՏ իրավունքների ոտնահարումը:
4. Ո՞ր ոլորտներում է հիմնականում տեղի ունենում իրավունքների ոտնահարումը (առողջապահություն, կրթություն, ընտանիք, ծառայություններ և այլն):
5. Կարո՞ղ եք նշել դեպքեր, հանգամանքներ կամ ոլորտներ, որոնցում պետք է այդ իրավունքների պաշտպանության առնչությամբ աշխատանքներ արվեն կառավարության, միջազգային կառույցների, ՀԿ-ների կամ այլ մարմինների կողմից: Ի՞նչ աշխատանք:
6. Կառավարության, միջազգային կառույցների և ՀԿ-ների կողմից իրականացված գործողությունները ի՞նչ բացասական հետևանքներ կարող են ունենալ ԼԳԲՏ անձանց վրա: Իսկ ի՞նչ դրական (քննարկել օրինակներ):
7. Իսկ որո՞նք են այդ միջոցառումների կամ գործողությունների դրական ու բացասական հետևանքները հասարակության համար:
8. Եթե ունենայիք հնարավորություն, ապա ո՞ր ոլորտում և ինչպիսի՞ փոփոխություն կիրականացնեիք՝ անհանդուրժողական վերաբերմունքը նվազեցնելու համար:

ԼԳԲՏ անձանց իրավունքների պաշտպանության անհրաժեշտությունը Հայաստանում:

9. Կարո՞ղ եք նշել երկրներ, որտեղ իրավունքներն ավելի պաշտպանված են: Իսկ ո՞ր երկրներում են դրանք ավելի շատ ոտնահարվում: Ինչու՞:
10. Հայաստանում ինչպիսի՞ն է իրավունքների պաշտպանության վիճակը: Իսկ ինչպե՞ս կնկարագրեիք իրավունքների ոտնահարումը: Ո՞ր երկրի հետ կհամեմատեիք (նմանություններ և տարբերություններ): Ինչու՞:

Սեռական կողմնորոշման/գենդերային ինքնության ազդեցությունն անհատի հարաբերությունների վրա հասարակության հետ: Խնդիրներ, դժվարություններ, խտրականություն, անհանդուրժողականություն:

11. Ինչպե՞ս է անդրադառնում մարդու սեռական կողմնորոշումը/գենդերային ինքնությունը շրջապատի հետ փոխհարաբերությունների վրա:

Ընտանիք

- Ծնողներ, քույրեր, եղբայրներ և այլն
- Սեփական ընտանիքի ստեղծում (ստիպողական ամուսնություն, խնդիրներ կնոջ/ամուսնուհետ)

Սոցիալական շրջապատ

- Ընկերներ, հարևաններ
- Աշխատավայր, ուսումնական հաստատություն

Լայն հասարակություն

- ՁԼՄ-ներ
- Պետական կառույցներ, իրավապահ մարմիններ
- Հասարակական ծառայություններ
- Օրենսդրական և քաղաքական դաշտ

- Անժամանակներ

12. Ո՞ր հարցերում (ամուսնություն, պարզ շփումներ, արտահայտման ազատություն և այլն), ու՞մ կողմից, ինչպե՞ս և ի՞նչ պատճառով է Հայաստանում դրսևորվում խտրականություն LԳԲՏ անձանց հանդեպ (քննարկել ներքոհիշյալ յուրաքանչյուր մակարդակում օրինակներով)

- ընտանիքում,
- բարեկամական, ընկերական շրջապատում,
- մասնագիտական - աշխատանքային շրջանակներում, աշխատանքի ընդունվել
- գյուղում/քաղաքում - դիտարկել դրանց տարբերությունները,
- հասարակական վայրերում, հանգիստ
- կրթական հաստատություններում - դպրոց, բուհ (քննարկել նաև թեմայի ուսումնասիրության ժամանակ երբևիցե խտրականության հանդիպման դեպք),
 - առողջապահական հիմնարկներում - բուժօգնության ստացում,
 - Սեռական առողջության հետ կապված ինչպիսի՞ խնդիրների և դժվարությունների հետ են առնչվում LԳԲՏ անձիք՝ ռիսկեր, խտրականություն, վախ (բացահայտման, հալածանքների) կամ այլ: Կարո՞ղ եք որևէ դեպք հիշել, որը տեղի է ունեցել ձեզ ծանոթ համայնքի անդամի հետ:
 - Ինչպիսի՞ խնդիրների կամ դժվարությունների են առնչվում LԳԲՏ անձինք կապված հոգեկան առողջության ոլորտի հետ (ներառյալ հոգեբուժական աջակցության ծառայությունները): Կարո՞ղ եք որևէ դեպք հիշել, որը տեղի է ունեցել ձեզ ծանոթ LԳԲՏ անձի հետ:
 - բանակում կամ կալանավայրում,
 - եկեղեցում,
 - ՋԼՄ-ների կողմից,
 - իրավապահ մարմինների կողմից,
 - ծառայությունների ստացման ընթացքում - կոմունալ վճարումներ, բնակարանի վարձակալություն, առք ու վաճառք և այլն:

13. Կարող եք հիշել ե՞րբ, որտե՞ղ և ու՞մ կողմից է վերջին անգամ ձեր հանդեպ անհանդուրժողականություն կամ խտրականություն դրսևորվել (նկարագրել իրավիճակ): Ո՞րն է եղել դրա պատճառը:

14. Որքանո՞վ եք տեղյակ եղել ձեր իրավունքներից: Ի՞նչ քայլեր եք կատարել կամ ու՞մ եք դիմել ձեր իրավունքները պաշտպանելու համար: Ո՞րն էր ձեր այդ վարքագծի պատճառը:

LԳԲՏ իրավունքների պաշտպանության խոչընդոտները և անհանդուրժողականության պատճառները

15. Ո՞րն է LԳԲՏ իրավունքների պաշտպանության հիմնական խոչընդոտը (քննարկել յուրաքանչյուրը).

- հասարակական անիրազեկություն,
- օրենսդրական դաշտ կամ կառավարման մարմինների ոչ շահագրգռվածություն,
- պետական քաղաքականություն (պայմանավորված, օրինակ երկրի ծնելիության մակարդակով)
 - ազգային մտածողություն, ավանդապաշտություն
 - կրոնական պատկերացումներ,
 - դաստիարակություն,

- նախկին փորձի բացակայություն:

16. Ձեր կարծիքով, Հայաստանում ի՞նչն է ավելի շատ քննադատվում՝ մարդու արտաքինը, վարքը, ապրելակերպը, թե՞ մտածողությունը:

Գեոդերային ինքնության և սեռական կողմնորոշման արտահայտման ինքնասահմանափակման գործոնները

17. Ի՞նչ եք կարծում, ի՞նչ պատճառով մարդը կարող է խուսափել իր սեռական կողմնորոշման/գեոդերային ինքնության մասին արտահայտվելուց: Ովքե՞ր են առավել հաճախ թաքցնում: Ինչու՞:

18. Եղել են դեպքեր, երբ դուք թաքցրել եք ձեր սեռական կողմնորոշումը/գեոդերային ինքնությունը կամ խուսափել եք բարձրաձայնել այդ մասին: Ո՞րն է եղել պատճառը: Իսկ ձեր կարծիքով, ի՞նչ տեղի կունենար, եթե դուք արտահայտվեիք: Ինչու՞ եք այդպես կարծում:

19. Ե՞րբ եք դուք ձեզ ազատ զգում բացահայտ դրսևորվելու: Ինչու՞: Իսկ ի՞նչն է խանգարում ձեզ ազատ արտահայտվելու:

20. Որո՞նք են սեռական կողմնորոշումը/գեոդերային ինքնությունը շրջապատում թաքցնելու առավելություններն ու թերությունները:

Խտրականության կամ անհանդուրժողականության նվազեցմանն ուղղված գործողություններ

21. Իսկ ի՞նչ է պետք անել հանդուրժողականությունը մեծացնելու համար: Ինչպե՞ս և ինչու՞:

22. Որո՞նք կլինեն այդ գործողությունների դրական և բացասական հետևանքները:

23. Հարցազրույցի ընթացքում տարբեր առնչություններով դուք խոսեցիք LQFS իրավունքների մասին: Իսկ դուք երբևէ օգտվել եք ձեր իրավունքներից (օրինակ՝ տղաների դեպքում՝ բանակի խնդիր): Իսկ գիտե՞ք որևէ մեկի, ով (նույնպես) օգտվել է իրավունքից:

Հասարակական պատկերացումներ

24. Ինչպիսի՞ տերմիններով են բնութագրվում LQFS անձիք հասարակության այլ անդամների կողմից:

25. Արդյոք կարիք կա՞ փոփոխելու հասարակության վերաբերմունքը: Ինչպե՞ս:

26. Ըստ ձեզ, անձնային ինչպիսի՞ հատկանիշներ պետք է ունենալ, Հայաստանում սեռային կողմնորոշման/գեոդերային ինքնության վերաբերյալ ազատ արտահայտվելու կամ դա ազատ դրսևորելու համար:





USAID
FROM THE AMERICAN PEOPLE



CIVIC ADVOCACY
SUPPORT PROGRAM - ARMENIA



Սույն հրապարակումը հնարավոր է դարձել իրականացնել Քաունթերփարթ ինթերնեշնլի Հայաստանյան ներկայացուցչության կողմից իրականացվող Քաղաքացիական շահերի պաշտպանության աջակցության ծրագրի, և Ամերիկայի Միացյալ Նահանգների բնակչության առատաձեռն աջակցության շնորհիվ՝ ԱՄՆ Միջազգային Ջարգացման Գործակալության No 111-A-00-04-00056-00 համագործակցության պայմանագրի շրջանակներում «Հանրային Տեղեկատվություն և Գիտելիքի Կարիք» ՀԿ-ի միջոցով: Սույնի բովանդակությունը, արտահայտված տեսակետերը և կարծիքները պատկանում են հեղինակին՝ «Հանրային Տեղեկատվություն և Գիտելիքի Կարիք» ՀԿ-ի պատասխանատվության տակ, և հնարավոր է, որ չհամընկնեն Քաունթերփարթ ինթերնեշնլի Հայաստանյան ներկայացուցչության, ԱՄՆ Միջազգային Ջարգացման Գործակալության և ԱՄՆ կառավարության տեսակետերի հետ: